

Սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացման 'Ծրագիր (ՍԱԲԾ)

Սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացման ծրագիրը իրականացվում է Ասիական բանկի աջակցությամբ: Այս ծրագիրը համահունչ է ՀՀ կառավարության "Աղետների ռիսկերի նվազեցման ազգային ռազմավարության" նպատակներին և ուղղված է երկրի սեյսմակայունության ապահովմանը, անհատական և հասարակական անվտանգության մակարդակի բարձրացմանը և երկրի կայուն զարգացմանը: Ծրագրի ընդհանուր արժեքը 107 մլն ԱՄՆ դոլար է, որից 88.5 միլիոնը Ասիական զարգացման բանկի կողմից տրամադրված վարկն է:

Հիմնական ակնկալվող արդյունքները նկարագրված են ստորև.

(i) **Ղպրոցական շենքերի սեյսմակայունության մակարդակի բարձրացում.** Նախատեսվում է կառավարության առաջնահերթության ցանկում ընդգրկված առնվազն 46 դպրոցների շենքերի սեյսմակայունությունը բարձրացնել կամ վերակառուցել՝ նորացված շինարարական նորմերին և դպրոցական շենքերի արդիականացման ուղեցույցներին համապատասխան.

(ii) **Սեյսմիկ աղետին դիմակայելու պատրաստվածության և պատասխան միջոցներ ձեռնարկելու կարողությունների զարգացում.** ՍԱԲԾ-ի շրջանակներում ընդգրկված յուրաքանչյուր դպրոցական շենքի համար նախատեսվում է մշակել Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքման միջոցառումների պլան, աշակերտների և ուսուցիչների՝ սեյսմիկ ռիսկերի վերաբերյալ իրազեկության մակարդակն էլ ավելի բարձրացնելու և երկրաշարժի ժամանակ ճիշտ քայլեր ձեռնարկելու և տարհանման վերաբերյալ ուղեցույցներ տալու նպատակով:

Ծրագրի շրջանակներում կտրամադրվեն 15 սեյսմիկ դիտակայանների վերազինման համար անհրաժեշտ սարքավորումներ, և առնվազն 45 աշխատակից կանցնի վերապատրաստում:

(iii) **Սեյսմիկ աղետների ռիսկերի կառավարմանը և նվազեցմանն ուղղված քաղաքականության համակարգերի կատարելագործում.** Ծրագրով նախատեսվում է նպաստել դպրոցների շինարարական նորմերի վերանայմանը և նորացմանը, և մշակել սեյսմիկ անվտանգության բարելավման և հանրային ենթակառուցվածքի կառավարման ֆինանսավորման ռազմավարություն:

(iv) **սեյսմիկ անվտանգության ներդրումային ծրագրի իրականացման համար անհրաժեշտ կարողությունների զարգացում.** Ծրագրի

արդյունավետ իրականացման համար ՍԱԲԾ-ն կնպաստի Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (ՀՏՀՀ) կարողությունների զարգացմանը:

Ծրագրի հիմնական շահառուները լինելու են բարձրացված սեյսմակայունությամբ և վերակառուցված դպրոցների մոտ 58,700 աշակերտներ, ուսուցիչներ և հարակից տարածքների թվով մոտ 87,500 բնակիչները, քանի որ երկրաշարժերի և այլ արտակարգ իրավիճակների ժամանակ դպրոցները կճառայեն որպես ժամանակավոր կացարաններ և ապաստարաններ: